ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՀՄԱ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

03.07.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյան,
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/17» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Գևորգյան)

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեյից ներկայացված եզրակացությունը քննարկելու և ընտրված մասնակից հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեյից ներկայացված եզրակացությունը քննարկելու և ընտրված մասնակից հայտարարելու մասին.

(Գ.Գևորգյան)

1.1 Քանի որ 02.07.2019թ. ստացված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորություններ չունի, ուստի հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ:

1.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/17» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Կ. Մխիթարյան

Գնահատող Ա. Մկրտչյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան